# ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆԻ ՌԱԶՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## Ընդհանուր դրույթներ

1 ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի/այսուհետև հաստատություն/ծնողական խորհուրդն իր կանոնադրությունը կազմում է ՀՀ պետական հանրակրթական հաստատության ծնողական խորհրդի օրինակելի կանոնադրության հիման վրա

2 Ծնողական խորհուրդը ստեղծվում է հաստատության գործունեությանն աջակցելու ,ծնողների և հաստատության միջև համագործակցություն ապահովելու նպատակով:

3.Ծնողական խորհուրդը

ա/իր կազմից առաջադրում է դպրոցի խորհրդի անդամության թեկնածուներ ըստ հաստատության կանոնադրության:

բ/ամրապնդում է ծնողների և հաստատության միջև կապերը.մանկավարժական կոլեկտիվի և ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցում ձևավորում է միասնական պահանջներ.

գ/ծնողներին ներգրավում է սովորողների արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներում.

դ/օգնում է հաստատությանը սովորողների հիմնական պարտադիր կրթությունն իրականացնելու հարցում,

ե/նպաստում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը,աջակցում է հաստատության ուսումնանյութական բազայի հարստացմանը այդ գործում ներգրավելով հովանավորների.

զ/նպաստում է ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու գործին.

է/աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների կոլեկտիվ հանգստի.ժամանցի կազմակերպմանը.

ը/ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը հաստատությունում

թ/ապահովում է ծնողներին տեղեկատվությամբ,կազմակերպում սեմինարներ ,խորհրդատվություններ.

## Ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպումը

1.Դասարանների ծնողական խորհուրդներն ընտրվում են դասարանի ընդհանուր ժողովի կողմից մեկ ուստարվա համար նախագահի և 2-4 անդամի կազմով:

2 Հաստատության ծնողական խորհուրդը կազմավորվում է համապատասխան դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից,որոնցից էլ ընտրվում է ծնողական խորհրդի նախագահ

3.Հաստատության դասարանական ծնողական խորհուրդներն իրենց որոշումներն ընդունում են իրենց քվակազմի կեսից ավելիի ներկայությամբ:

4 Կարևոր հարցերի քննարկման համար ծնողական խորհուրդը հրավիրում է ընդհանուր կամ ներկայացուցչական ժողովներ/դասարանականը ոչ պակաս 4

անգամ.համադպրոցականը 2 անգամ ուստարվա ընթացքում/.Դասարանական ծնողական ժողովներին դասղեկի,իսկ հաստատության ընդհանուր ժողովին տնօրենի ներկայությունը պարտադիր է

5 Ծնողական խորհուրդը իր աշխատանքների մասին հաշվետվություն է տալիս խորհրդի կազմի վերընտրության ժամանակ:

6 Հաստատության տնօրենին հաստատության ծնողական խորհուրդներինմիջև հակասություն առաջանալու դեպքում հարցը լուծվում է մարզային /համայնքային/ Կրթության բաժնի կողմից:Հաստատության ծնողական խորհուրդները տնօրենի նկատմամբ իրենց անվստահությունը կարող են ներկայացնել մարզային կրթության բաժին/համայնքի ղեկավարին և դպրոցի խորհրդին/.

7 Ծնողական խորհրդի քարտուղարը կազմում է նիստերի և ընդհանուր ժողովներիարձանագրությունները:

8 Հաստատության ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է

9 Հաստատության ծնողական խորհուրդը համագործակցում է հաստատության մանկավարժական խորհրդի հետ:

**Ծնողական խորհրդի իրավասությունները**

1 Հաստատության ծնողական խորհուրդը իրավասու է.

ա/հաստատության տնօրենի կամ մանկավարժական խորհրդիքննարկմանը ներկայացնել աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման,մանկավարժների խրախուսման,իրենց պարտականությունների մեջ թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելուվերաբերյալ առաջարկություններ.

բ/մասնակցել հաստատության վճարովի ծառայությունների կազմակերպման,պայմանագրերի կնքման և արտաբյուջետայինմիջոցներիտնօրինման աշխատանքներին,

գ/հանրակրթական դպրոցի կանոնադրության պահանջների խախտման դեպքում դիմել տնօրենին,անհրաժեշտության դեպքում մարզային կրթության բաժին/համայնքի ղեկավարին/.

դ/լսել գործադիր տնօրենի հաղորդումը հաստատության գործունեության վիճակի և հեռանկարների մասին,ստանալ նրանից ծնողներին հետաքրքրողպարզաբանումներ: